

ք. Երևան, Ռուբինյանց 28

07.06.2012թ. ժամը 14<sup>00</sup>

«Ալմաստ» Բաց Բաժնետիրական Ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) տնօրենների խորհրդի (այսուհետ՝ «Խորհուրդ») նիստին (այսուհետ՝ «Նիստ») մասնակցում էին հետևյալ խորհրդի անդամները՝

Մանվել Սահակյանը	(Խորհրդի անդամ),
Օլգա Գասպարյանը	(Խորհրդի անդամ),
Ռուբեն Ներսիսյանը	(Խորհրդի անդամ),
Վարազդատ Ներսիսյանը	(Խորհրդի անդամ):

Նիստից բացակայում էր Խորհրդի նախագահ Կարեն Մանուկովը:

Բաց քվեարկությամբ խորհրդի նախագահ ընտրվեց Վարազդատ Ներսիսյանը

#### Օ ր ա կ ա ր Գ

1. Ընկերության 2011 թվականի տարեկան հաշվետվության նախնական հաստատման հարցը:
2. Ընկերության բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողով հրավիրելու և օրակարգը հաստատելու հարցը:

#### Լ Ս Ե Ց Ի Ն:

##### Հարց 1:

Հարցի կապակցությամբ ելույթ ունեցավ Խորհրդի նախագահ Վարազդատ Ներսիսյանը և առաջարկեց նախնական հաստատել Ընկերության 2011 թվականի տարեկան հաշվետվությունը:

Հարցի շուրջ ծավալվեց մտքերի փոխանակություն, որից հետո հարցը դրվեց քվեարկության:

Մանվել Սահակյան	-	Կողմ
Օլգա Գասպարյան	-	Կողմ
Ռուբեն Ներսիսյան	-	Կողմ
Վարազդատ Ներսիսյան	-	Կողմ

#### Խ Ո Ր Հ Ո Ւ Դ Դ Ը Մ Ի Ա Չ Ա Յ Ն Ո Ր Ո Շ Ե Ց.

- Նախնական հաստատել Ընկերության 2011 թվականի տարեկան հաշվետվությունը:

#### Լ Ս Ե Ց Ի Ն:

##### Հարց 2:

Հարցի շուրջ ելույթ ունեցավ Խորհրդի նախագահ Վարազդատ Ներսիսյանը և առաջարկեց 2012 թվականի հունիսի 29-ին, ժամը 16:00-ին, «Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Ռուբինյանց փողոց, քիվ 28» հասցեում հրավիրել Ընկերության տարեկան ընդհանուր ժողով հետևյալ օրակարգով՝

1. Ընկերության տարեկան ժողովի Հաշվիչ հանձնաժողովի անդամների ընտրության և հաստատման հարցը:
2. Ընկերության տնօրենի զեկույցը 2011 թվականի ընթացիկ գործունեության վերաբերյալ:
3. Ընկերության 2011 թվականի գործունեության տարեկան հաշվետվությունների և հաշվեկշռի ստուգման վերաբերյալ վերստուգողի եզրակացության ներկայացումը:
4. Ընկերության 2011 թվականի գործունեության տարեկան հաշվետվությունների և հաշվեկշռի ստուգման վերաբերյալ աուդիտորական եզրակացության ներկայացումը:
5. Ընկերության 2011 թվականի տարեկան հաշվետվության, հաշվապահական հաշվեկշռի, շահույթի և վնասի հաշվի, շահույթի և վնասի բաշխման հարցը:
6. Ընկերության տնօրենների խորհրդի քանակական կազմի, դրա անդամների ընտրության և հաստատման հարցը:
7. Ընկերության վերստուգողի ընտրության և հաստատման հարցը:
8. Ընկերության աուդիտը իրականացնող անձի ընտրության և հաստատման հարցը:

Առաջարկեց տարեկան ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը հաստատել սույն թվականի հունիսի 07-ի դրությամբ:

Հարցի շուրջ ծավալվեց մտքերի փոխանակություն, որից հետո հարցը դրվեց քվեարկության:


Մանվել Սահակյան	-	Կողմ
Օլգա Գասպարյան	-	Կողմ
Ռուբեն Ներսիսյան	-	Կողմ
Վարազդատ Ներսիսյան	-	Կողմ

**ԽՈՐՀՈՒՐԴԸ ՄԻԱԶԱՅՆ ՈՐՈՇԵՑ.**


- 2012թվականի հունիսի 29-ին, ժամը 16:00-ին, «Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Ռուբինյանց փողոց, թիվ 28» հասցեում հրավիրել Ընկերության տարեկան ընդհանուր ժողով և հաստատել հետևյալ օրակարգով՝
  1. Ընկերության տարեկան ժողովի Հաշվիչ հանձնաժողովի անդամների ընտրության և հաստատման հարցը:
  2. Ընկերության տնօրենի զեկույցը 2011 թվականի ընթացիկ գործունեության վերաբերյալ:
  3. Ընկերության 2011 թվականի գործունեության տարեկան հաշվետվությունների և հաշվեկշռի ստուգման վերաբերյալ վերստուգողի եզրակացության ներկայացումը:
  4. Ընկերության 2011 թվականի գործունեության տարեկան հաշվետվությունների և հաշվեկշռի ստուգման վերաբերյալ աուդիտորական եզրակացության ներկայացումը:
  5. Ընկերության 2011 թվականի տարեկան հաշվետվության, հաշվապահական հաշվեկշռի, շահույթի և վնասի հաշվի, շահույթի և վնասի բաշխման հարցը:
  6. Ընկերության տնօրենների խորհրդի քանակական կազմի, դրա անդամների ընտրության և հաստատման հարցը:
  7. Ընկերության վերստուգողի ընտրության և հաստատման հարցը:
  8. Ընկերության աուդիտն իրականացնող անձի ընտրության և հաստատման հարցը:
- «ԲԱՄՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ օրենքով սահմանված կարգով Ընկերության բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի գումարման մասին ծանուցել ընկերության բաժնետերերին և ժողովին մասնակցելու իրավունք ունեցող այլ անձանց՝ մամուլի միջոցով հրապարակելով տարեկան ժողովի գումարման մասին հայտարարությունը:
- 2012 թվականի հունիսի 07-ի դրությամբ կազմել տարեկան ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը:
- Հաստատել ժողովի նախապատրաստման ընթացքում տրամադրվող հետևյալ տեղեկությունների և նյութերի ցուցակը.
  - ա) Ընկերության տարեկան հաշվետվությունը, հաշվապահական հաշվեկշռը, շահույթների և վնասների հաշիվը,
  - բ) Ընկերության վերստուգողի եզրակացությունը,
  - գ) Աուդիտն իրականացնող անձի եզրակացությունը,
  - դ) Տեղեկություններ Խորհրդի կազմում ընդգրկվելու համար առաջադրվող թեկնածուների մասին,
  - ե) Տեղեկություններ վերստուգողի /վերստուգող հանձնաժողովի/ ընտրության համար առաջադրվող թեկնածուի մասին,
  - զ) Տեղեկություններ Ընկերության աուդիտն իրականացնող անձի ընտրության համար առաջադրվող թեկնածուի մասին,
  - է) Տեղեկություններ Հաշվիչ հանձնաժողովի կազմում ընդգրկվելու համար առաջադրվող թեկնածուների մասին,
  - ը) Կանոնադրության նախագիծը նոր խմբագրությամբ:
- Ըստ ներկայացված մնուշի՝ հաստատել ժողովի ընթացքում բաժնետերերին տրամադրվող քվեաթերթիկների ձևն ու բովանդակությունը:


Օրակարգի բոլոր հարցերը սպառվեցին:

Ընկերության Խորհրդի նիստը հայտարարվեց փակված:

Խորհրդի նախագահող՝  Վարազդատ Ներսիսյան

Խորհրդի անդամներ՝  Մանվել Սահակյան

 Օլգա Գասպարյան

 Ռուբեն Ներսիսյան

Սույն արձանագրությունը կազմված է 08.06.2012թ. դրությամբ, 2 /երկու/ օրինակից և բաղկացած է 2 էջից: